

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 17
վիճակագրության պետական խորհրդի նիստի

14.12.2011թ.

ժ.11: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ս.Դավթյան (խորհրդի անդամներ)

Հ. Գրիգորյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Վ.Սարոյան (իրավաբանական բաժնի պետ), Ա.Սաֆյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ), Լ.Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Ն.Մուշեղյան (վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժնի պետ), Հ. Տիտիգյան (ֆինանսների վիճակագրության բաժնի պետ):

Օրակարգի նախագծում՝ չորս հարց.

1. «2012 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Ն.Մուշեղյան/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի ֆինանսների վիճակագրության բաժնի կողմից՝ 2006-2010թթ. «Կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև թիվ 1-ՏԳ պետական վիճակագրական հաշվետվություններով հավաքագրված տեղեկատվության հիման վրա ձևավորված անվանագերծված տվյալների բազան Համաշխարհային Բանկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Հ.Տիտիգյան/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին.

Հաղորդում՝ Ֆրանսիայի Փարիզ քաղաքում 2011 թվականի հոկտեմբերի 24-ից 28-ը Էներգետիկայի Միջազգային Գործակալության կողմից կազմակերպված «Էներգետիկայի վիճակագրություն» խորագրով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Հ.Հակոբյան/

4. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Զվեարկության արդյունքները-կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «2012 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Ն.Մուշեղյան/

Որոշեցին՝

հաստատել «2012 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը» համաձայն հավելվածի:

/Նորմատիվ/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի ֆինանսների վիճակագրության բաժնի կողմից՝ 2006-2010թթ. «Կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև թիվ 1-ՏԳ պետական վիճակագրական հաշվետվություններով հավաքագրված տեղեկատվության հիման վրա ձևավորված անվանագերծված տվյալների բազան Համաշխարհային Բանկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Հ.Տիտիգյան/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի ֆինանսների վիճակագրության բաժնին՝ Հայաստանի Հանրապետության

ազգային վիճակագրական ծառայության կողմից 2006-2010թթ. «Կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև թիվ 1-ՏԳ պետական վիճակագրական հաշվետվություններով հավաքագրված տեղեկատվության հիման վրա ձևավորված անվանագերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով տրամադրել Համաշխարհային Բանկին Հայաստանի տնտեսական աճի ուսումնասիրություն ծրագրի վերլուծական աշխատանքների իրականացման նպատակով:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

3. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին.

Հաղորդում՝ Ֆրանսիայի Փարիզ քաղաքում 2011 թվականի հոկտեմբերի 24-ից 28-ը Էներգետիկայի Միջազգային Գործակալության կողմից կազմակերպված «Էներգետիկայի վիճակագրություն» խորագրով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Հ.Հակոբյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին հաղորդումը ընդունել ի գիտություն

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ԸՄՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ